Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Սարատակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Ստեղծագործական շարադրություն գրելու կարողության ձևավորումը տարրական դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Սուքիասյան

Ուսուցիչ՝ Ղարաղազարյան Սիլվարդ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3

1. Խոսքի զարգացման ուղղությունները տարրական դպրոցում… 4-9

2. Նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը չորրորդ դասարանում 10-17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……18-19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……..20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցում աշակերտների գործունեությունն ամբողջությամբ կազմակերպվում և ղեկավարվում է մանկավարժների կողմից. որքան էլ որ գիտակցվում է աշակերտների ինքնուրույնության, ակտիվության կարևորությունը, այնուամենայնիվ, նրանց գործունեության, թե' բովանդակությունը, թե' ձևերը նախապես մշակվում են և բծախնդրորեն կառավարվում :

Մեր երկարամյա աշխատանքային փորձը մեզ բերել է այն եզրակացության, որ կրտսեր դպրոցականների զարգացնող ուսուցման բանալին կրթության ստեղծագործական գործունեություն ապահովող բաղադրիչն է: Այն ոչ թե գիտական մատչելի հասկացությունների համալիրն է, այլ դրանք յուրացնելու համար աշակերտների անցած ճանապարհը. երեխայի մտածողության զարգացումն ու հենց այս փուլում նրանց մտավոր աճի տանող ճանապարհն է ամբողջությամբ:

Հետազոտության նպատակը մեր հիմնախնդրի ուղղությամբ տարրական դպրոցում առկա իրավիճակի ուսումնասիրման հիման վրա մանկավարժամեթոդական մոտեցումների այնպիսի համակարգի մշակումն է, որը լիարժեքորեն կհամապատասխանի կրթության այդ օղակում մայրենիի ուսուցման խնդիրներին և կապահովի սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացումը:

Մեր աշխատանքի ընթացքում վերլուծել և ամփոփել ենք տարրական դպրոցում սովորողների ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ հոգեբանամանկավարժական և մեթոդական պայմանները՝ ծրագիր, դասագիրք և դասագործընթաց համակարգում և մշակել ենք կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների բնութագրիչները և դրանց զարգացման գիտատեսական գործոնները:

1.Խոսքի զարգացման ուղղությունները տարրական դպրոցում

Հայտնի է, որ տարրական դպրոցում մայրենիի ուսուցման նպատակը ոչ միայն կրտսեր դպրոցականներին գրել, կարդալ սովորեցնելն է, այլև գրական լեզվի յուրացման հիմքի վրա աշակերտների հաղորդակցական ունակությունների ձևավորումն ու բանավոր խոսքի զարգացումն է: Հայտնի է նաև, որ գրագետ խոսքի հիմնական որակական բնութագրիչը ճիշտ, դիպուկ և հասկանալի արտահայտվելու կարողությունն է, բանավոր խոսքի բաղադրիչների յուրացումը:

Հայտնի է, որ լեզվի հիմնական միավորներն են հնչյունը, վանկը, բառը, բառակապացությունը, նախադասությունը և տեքստը: Սրանց շուրջ տարվող աշխատանքի գործընթացում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման խնդիրները՝ բառապաշարի զարգացում, խոսքի հնչյունային մշակույթի և խոսքի քերականական կողմի ձևավորում, կապակցված խոսքի զարգացում, խոսքի և լեզվի տարրական իրողությունների մասին գիտելիքների յուրացում:

Ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

ա) Բառապաշարի զարգացում:

Երեխայի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներն ու գործընթացի առանձնահատկություններն ուսումնասիրվել են նաև կազմաբնախոսության, հոգեբանության, հոգելեզվաբանության համատեքստում, իսկ բառապաշարի հարստացման մեթոդաբանությունը մշակվել է՝ հաշվի առնելով նաև այդ ուսումնասիրությունների արդյունքները:

Քանի որ բառը խոսքի զարգացման կարևոր միավոր է, ապա բառապաշարի տիրապետումը երեխայի խոսքի զարգացման հիմքն է: Բառապաշարի միջոցով ներկայացվում է խոսքի բովանդակությունը. բառերը ներկայացնում են առարկաներ,

երևույթներ, նրանց միջև գոյություն ունեցող կապեր, գործողություններ, առարկաների որակներ, հատկանիշներ: Երեխան, յուրացնելով բառերը, դրանց միջոցով իրականացնում է կենսագործունեություն և այդ ճանապարհով լուծում շրջապատի հետ հաղորդակցման իր խնդիրները:

Բառապաշարի հարստացման գործընթացում կարևոր են բառի նշանակության՝ բառիմաստի յուրացումը, նրա տեղին գործածումը տարբեր իրադրություններում:

Սրանք կարևոր գործընթացներ են, որովհետև խոսելիս, պատմելիս, վիճելիս, արդարանալիս, մեղադրելիս, պաշտպանվելիս, դատողություններ անելիս և այլ խոսքային գործունեություն վարելիս բառապաշարի հարստությունը, դրա դիպուկ ու տեղին գործածումը չափազանց կարևոր են միջանձնային հարաբերությունների կարգավորման հարցում:

Հայտնի է, որ երեխայի՝ շրջապատող միջավայրին ծանոթացումը, այդ գործընթացի հիմնական խնդիրներն ու բովանդակությունը որոշվում են նրա ճանաչողական հետաքրքրությունների հաշվառմամբ: Ուստի սկսած առաջին դասարանից՝ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքում կարևորվում է երեխաների ճանաչողական հետաքրքրությունների հաշվառումը և բառապաշարի հարստացումը նրանց հետաքրքրող ոլորտներին առնչվող բառամթերքով:

Ժամանակակից հայոց լեզվի մեթոդիկայում մեծ նշանակություն է տրվում սովորողների կողմից անհրաժեշտ բառերի ընտրությանը ու կիրառմանը, բազմիմաստ, հոմանիշ, հականիշ բառերի գործածմանը և այդ ուղղությամբ անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը: Այս գործընթացում բառային աշխատանքի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բառի նշանակությունը որոշվում է՝ հաշվի առնելով.

• առարկայի հետ բառի համադրումը,

• բառի կապը որոշակի հասկացություններին,

• բառի համակցումն այլ լեզվաբանական միավորներին:

Փոքրիկի բառապաշարի հարստացումը դպրոցական ուսուցման համար նրան նախապատրաստելու կարևոր գործոններից մեկն է:

Ըստ ժամանակակից մասնագետների տվյալների՝ մեկ տարեկան երեխան իր ակտիվ բառապաշարում ունի 10-12 բառ: Երկու տարեկանը՝ 300-400 բառ, երեք տարեկանը՝ 1500 բառ, չորսը՝ 1900, հինգը՝ 2000-2500, վեցը՝ 3000-3500 բառ: Հինգ տարեկան երեխան օրեկան գործածում է 11000 բառ: Ամենաշատ գործածվող բառերն են <<ես>> և <<ես ուզում եմ>>, <<ես սիրում եմ>>, <<ես պետք է>> նախադասություններն ու արտահայտությունները: L.U. Վիգոդսկին ուշագրավ է բնութագրել երեխայի խոսքի զարգացման փուլերը՝

• առաջին աստիճան-բառը ներկայացնում է միայն մեկ առարկայի զգայական պատկերը, օրինակ՝ տիկնիկ,

• երկրորդ աստճան-բառը ներկայացնում է միանման առարկաների զգայական պատկերը, օրինակ՝ մեծ, փոքր, կարճ, սիրուն տիկնիկ,

• երրորդ աստիճան-բառը ներկայացնում է տարբեր խմբի առարկաներ, որոնք ունեն միևնույն նշանակությունը: Օրինակ՝ խաղի համար խաղալիք՝ տիկնիկ, գնդակ, սպասք. բնորոշ է 3-3,5 տարեկաններին,

• չորրորդ աստճան-բարձրագույն աստիճանն է, երբ բառը ներկայացնում է դարձյալ լայն իմաստով: Օրինակ՝ հագուստ, կահույք, սպասք. այն բնորոշ է 5 -6 տարեկանին:

բ) Խոսքի հնչյունային մշակույթի ձևավորում:

Սա բազմակողմանի հիմնահարց է, որի մեջ ընդգրկված են առավել մասնավոր խնդիրներ՝ կապված հնչյունների յուրացման և արտաբերման հետ. խոսքային լսողության զարգացում, ճիշտ հնչարտաբերում, խոսքի արտահայտչամիջոցների

(ուժգնություն, առոգանություն, երանգ և տեմպ) տիրապետում: Այս խնդրի լուծման գործընթացում մեծ տեղ է տրվում երեխային խոսքային վարքի մշակույթին և դրա ձևավորմանը:

Հնչյունային մշակույթի ձևավորումը նախատեսում է՝

• ճիշտ հնչարտաբերման կարողության ձևավորում. սրա համար անհրաժեշտ է խոսքային լսողության, խոսքային շնչառության, խոսքաշարժողական օրգանների զարգացում.

• հնչյուններն արտահայտիչ արտաբերելու կարողության ձևավորում. Արտահայտիչ խոսքի յուրացումը նախատեսում է ձայնի ուժգնության և որոշակի բարձրության տիրապետում, խոսքի ռիթմի, անհրաժեշտ դադարների, տարաբնույթ առոգանական շեշտերի յուրացում:

Երեխաների հնչյունային մշակույթի զարգացման անհրաժեշտության մասին ուշագրավ կերպով է ներկայացված Ջ. Գյուլամիրյանի ուսումնասիրություններում: Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ խոսքի հնչյունային մշակույթի մեջ առանձնացվում է երկու բաժին՝ խոսքի արտահայտչականություն և խոսքային լսողություն: Պայմանավորված այս բաժանմամբ՝ հնչյունային լսողության զարգացման աշխատանքները տարվում են երկու ուղղությամբ՝

ա) խոսքաշարժողական օրգանների զարգացում,

բ) խոսքի ընկալման կարողության զարգացում:

Գիտնականները և հետազոտողները նշում են, որ հստակ խոսքը սոցիալական հաղորդակցման, անձնավորության լիարժեք ձևավորման և ուսումնական գործունեության ծավալման կարևոր պայման է:

Խոսքի հնյունային կողմի ձևավորումն ըստ Ջ. Գյուլամիրյանի իրականացվում է երկու ուղղությամբ՝ դասերի ընթացքում և դասերից դուրս: Դասերից դուրս կատարվում

են հատուկ վարժություններ, իսկ խմբային պարապմունքները՝ սոցիալական միջավայրի պայմաններում խոսքային ունակությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց են: Աշխատանքի արդյունավետությունն ապահավելու համար խոսքի զարգացման վարժությունները կարելի է անցկացնել նաև երաժշտական և ֆիզիկական դաստիարակության դասերի ընթացքում:

գ) Խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում:

Անառարկելի է, որ առանց քերականական տարրական գիտելիքների հնարավոր չէ իրականցնել խոսքային ճիշտ հաղորդակցում,ինքնուրույն ստեղծագործական խոսքի կառուցում: Փորձը ցույց տալիս, որ 6-9 տարեկան երեխայի համար լեզվի քերականական կողմի յուրացումը դժվար է, քանի որ այն առավել վերացական բնույթ ունի: Հետևաբար, պիտի մեթոդական բոլոր միջոցներով այդ գործընթացը դարձնել դյուրին:

Հայտնի է, որ աշակերտը լեզվի քերականական կողմը նախ յուրացնում է գործնականում՝ մեծահասակի խոսքի ընդօրինակման և լեզվական ընդհանրացումների շնորհիվ, ապա նոր՝ ուսուցման ճանապարհով այդ ամենի քերականական հիմքն է ձևավորվում:

Լեզվի քերականական կառուցվածքի յուրացման գործընթացում պիտի կարևորել՝ հոլովների, ածականների աստիճանների և դերանունների իմացությունն ու ճիշտ գործածումը: Այս ուուղղությամբ կատարվող վարժությունները գործնականորեն նպաստում են սովորողների կողմից բառի փոփոխման ավելի բարդ ձևերի յուրացմանն ու նախադասություն, խոսք հյուսելու ունակությունների ձեռքբերմանը:

դ) Կապակցված խոսքի զարգացում:

Կապակցված խոսքի հիմնական բնորոշումը նրա ընկալելի լինելն է զրուցակցի համար: Մեթոդիկայում <<կապակցված խոսք>> եզրույթը կիրառվում է մի քանի նշանակությամբ՝

1. խոսողի գործունեություն՝ գործընթաց,
2. այդ գործընթացի արդյունք,
3. խոսքի զարգացման մեթոդիկայի առանձին բաժին:

Ըստ ժամանակակից մեթոդիկայի կապակցված խոսքը մտքով և կառուցվածքով ամբողջական, ինքնուրույն, միասնական թեմատիկայով ավարտուն խոսքն է: Դրա հիմնական գործառույթը հաղորդակցումն է: Այն իրականացվում է երկու ձևով՝ *երկխոսության և մենախոսության*: Այս երկու ձևերը իրարից տարբերվում են հաղորդակցման ուղղվածությամբ, լեզվաբանական և հոգեբանական բնույթով, նպատակներով և դրսևորվում են դեռևս 6 տարեկան երեխաների խոսքում:

2 Նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը չորրորդ դասարանում (փորձարարական աշխատանքների ներկայացում)

Ինչպես նշեցինք, բնագրերը՝ տեքստերը, լինում են նկարագրական, դատողական և գնահատող: Ներկայացնենք տարրական դպրոցում նկարագրական տեքստ կառուցելու կարողության ձևավորման դասի մի քանի ձև:

Նախ կարևորում ենք նշել, որ խնդիրը պիտի լուծվի առաջարկվող հաջորդականությամբ, քանի որ յուրաքանչյուր հաջորդ դասը կառուցվում է նախորդի տրամաբանության վրա:

Նկարագրական տեքստեր կառուցելու կարողությունը կարելի է ձևավորել տարրական դպրոցի ցանկացած դասարանում՝ պայմանավորված ուսումնական ծրագրով, դասարանի ընդհանուր պատրաստվածության մակարդակով, ուսուցչի թեմատիկ պլանավորումով:

Ինչպես հայտնի է, նկարագրությունն առարկայի (երևույթի) համալիր հատկանիշների մասին միաժամանակյա հաղորդումն է: Առարկայի, մարդու, երևույթի, տեսարանի հատկանիշները կարելի է ներկայացնել՝ պայմանավորված խոսողի նպատակներով.

• Ինչ նպատակ է հետապնդում նկարագրողը:

• Ինչն է կարևորում նա:

• Որ հատկանիշի վրա է կամենում հրավիրել ունկնդրի (ընթերցողի) ուշադրությունը:

Ներկայացնենք նկարագրական խոսք կառուցելու կարուղության ձևավորման աշխատանքների մի համակարգ, որը մենք իրականացնել ենք 4–րդ դասարանում:

ԴԱՍ 1

Դասի թեման՝ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Նախապատրաստում նոր նյութի ընկալմանը.

Խթանման փուլ

Նշենք, որ նախորդ դասերից աշակերտներն ընդհանուր ծանոթություն ունեն տեքստի տեսակների մասին: Օրինակ՝ նրանք գիտեն հարցադրումներ տալ տեքստի բովանդակության վերաբերյալ (պատմողական՝ «Ի՞նչ է պատահել», «Ի՞նչ եղավ», նկարագրական՝ «Ինչպիսի՞», դատողական՝ «Ինչո՞ւ»): Բացի այդ, դեռևս 2-րդ դասարանի 2-րդ կիսամյակից աշակերտները պատկերացում ունեն նախագծի (պլանի), հենակետային բառերի, ենթատեքստերի, գլխավոր մտքի (3-րդ դասարանից) մասին:

Առաջադրանք 1

Բերված երեք բնագրերի մեջ աշակերտները պետք է որոշեն, թե որն է նկարագրականը:

Գրատախտակը բաժանված է երեք մասի, յուրաքանչյուրում գրված է մեկ բնագիր:

Բնագիր 1.

Շնիկը՝ միսը բերանում անցնում էր կամրջի վրայով: Նա ջրում նկատեց իր արտացոլանքը:Շնիկը գցեց բերանի միսը և նետվեց ջուրը՝ նոր մսի կտորի ետևից: Նա մնաց առանց մսի. իրենը ջուրը քշեց-տարավ , ջրի միջինն էլ նա չկարողացավ բռնել:

Բնագիր 2.

Սա իմ շուն է: Նա ունի կարճ և հզոր թաթեր, երկար, կարճլիկ-պնդակազմ մարմին: Այս շան ականջները կախված են, պոչը՝ երկար: Նա ինձ շատ դուր է գալիս:

Բնագիր 3.

Ես վաղուց խնդրում եմ, որ մայրիկս ինձ շնիկ գնի: Շունը շատ հավատարիմ է: Նա մարդու օգնականն է: Նա կարող է ինձ հետ խաղալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ինձ պաշտպանել: Ահա թե ինչու եմ ես ցանկանում շուն պահել:

-Այս բնագրերից ո՞րն է նկարագրական,- դիմեցինք մենք դասարանին:

Դասարանը լռեց. այս պահին կարևոր է , որ նրանք լսեն նկարագրական բառը և համեմատեն բնագրերը և նկատեն տարբերությունները:

-Լա՛վ, ես ձեզ կհուշեմ,- օգնեցինք մենք: Նկարագրական է երկրորդ բնագիրը: Իսկ հիմա դուք պիտի ասեք, թե ինչու է երկրորդ բնագիրը ձեր կարծիքով կարելի է համարել նկարագրական:

Երեխաների պատասխանները լսելուց հետո գրատախտակի վրա ամրացրեցինք ցուցատախտակի վրա գրված հարցական բառը.

Ինչպիսի՞

- Արդյո՞ք ամբողջությամբ է բնագիրը պատրաստ, ոչինչ պետք չէ՞ ավելացնել,- դարձյալ աշակերտներին դիմեցինք մենք:

Աշակերտները նշեցին՝ վերնագիր չունի:

-Փորձենք այն վերնագրել: Լսենք ձեր առաջարկությունները: (Նկարագրությունից երեխաները կռահեցին, որ խոսքը գորշուկ շան մասին է: Տեքստի վերևի մասում որպես վերնագիր փակցրեցինք գորշուկ շան նկարը):

2. Նոր նյութի ուսումնասիրում

Իմաստավորման փուլ

-Երեխանե՛ր, ո՞ր բառերը ձեզ օգնեցին կռահել, ո՞ր այդ շունը պատկանում է գորշուկ շան ցեղին: Ո՞ր հատկանիշներով է գորշուկ շունը տարբերվում այլ շներից: Բնագրի մեջ գտե՛ք այդ հատկանիշները ցույց տվող բառերը և կարդացե՛ք, թե ինչ են ցույց տալիս այդ բառերը:(Առարկայի հատկանիշը):

Ուսուցիչ. -Այդ բառերը նկարագրության գլխավոր հատկանիշներն են: Եկե՛ք այդ բառերը նշենք պայմանական նշանով:

Փակցվում է պայմանական նշանը:

–Հատկանիշ ցույց տվող, ո՞ր բառերն են, որոնք կարող ենք նաև գործածել շների այլ ցեղերը նկարագրելիս: Այս հատկանիշները համարվում են երկրորդական և գործածվում են շանն առավել մանրամասն նկարագրելու նպատակով :

Ամրացվում է պայմանական նշանը:

–Երեխանե՛ր, իսկ այժմ կարդանք բնագրի վերջին տողը: Ի՞նչ է ցանկանում արտահայտել հեղինակն այդ խոսքերով: (Արտահայտում է իր վերաբերմունքը շների այդ ցեղի նկատմամբ):

-Ճի՛շտ է: (Փակցվում է նշանը:)

-Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ մենք «գլխավոր հատկանիշները», «մանրամասն նկարագրությունը», և «սեփական վերաբերմունքը» արտահայտեցինք այսպիսի պայմանական նշաններով:

Աշխատանքի ընթացքից ելնելով՝ գրատախտակի մաքուր մասում պետք է կազմել պայմանական նշանների ամփոփիչ սխեման:

…… - գլխավոր հատկանիշները ներկայացնող պայմանանիշ

…… - մանրամասն նկարագրությունը ներկայացնող պայմանանիշ

…… - սեփական վերաբերմունքը ներկայացնող պայմանանիշ

–Երեխանե՛ր, մենք ի՞նչ կազմեցինք: (Նկարագրության պլանը) Եվս մեկ անգամ տեսնենք, թե ինչպես է կառուցվում նկարագրությունը: Դրա համար մեկ անգամ ևս կարդանք երկրորդ բնագիրը:

2.Սովորածի ամրապնդում

Իմաստավորման փուլ

Գրատախտակին ամրացրեցինք չորս նկար. անտառը՝ տարվա տարբեր եղանակներին:

-Ուսումնասիրենք նկարները.- դիմեցինք դասարանին: - Ես կնկարագրեմ դրանցից մեկը, իսկ դուք որոշեք, թե որի մասին է խոսքը:

Այնուհետև սկսեցինք պատմել.

Ես մտնում եմ անտառ: Ոտքերիս տակ խշշում են թափված տերևները:Ծառերը մերկ են: Օդը մաքուր է և սառը: Երկինքը մոխրագույն է, անամպ: Տարվա այս եղանակին ես շատ եմ սիրում քայլել անտառով:

-Ես ո՞ր նկարի բովանդակությունը պատմեցի,- դիմեցի դասարանին:

Երեխաներն իսկույն կռահեցին, թե որ եղանակի մասին է խոսքը, և փորձեցին հիմնավորել իրենց պատասխանը: Մենք սկզբում շփոթեցրինք նրանց և ասացինք, որ մաքուր օդ, մոխրագույն երկինք կարող են լինել և՛ ձմռանը, և՛ գարնանը:

Երեխաները պետք է գտնեն այն գլխավոր հատկանիշը, որը հատուկ է միայն աշնանային անտառին:

-Խշշում են թափված տերևները, ծառերը մերկ են,- որոշեցին երեխաները:

–Երեխանե՛ր, իսկ ի՞նչ են իրենցից ներկայացնում մնացած հատկանիշները,- դիմեցինք մենք դասարանին: - Կարդացե՛ք դրանք: Այո՛ ճիշտ է՝ դրանք մանրամասն նկարագրություններ են:

Այնուհետև մենք գրատախտակին փակցրեցինք է մի խառը բառախումբ և դիմեցինք աշակերտներին.

-Այժմ որոշե՛ք և կարդացե՛ք այն խոսքերը, որոնք արտահայտում են հեղինակի վերաբերմունքը աշնանային անտառի նկատմամբ:

Առաջադրանքը կատարելուց հետո շարունակեցինք.

-Այսպիսով, մենք նկարագրության ինչպիսի՞ մասեր առանձնացրեցինք: (Պատասխանելուց պետք է օգտվել սխեմայից:)

4. Աշխատանք խմբերի հետ

Կշռադատման փուլ

Նախապես պատրաստել էինք ծրարներ, որոնց մեջ տեղավորված էին առաջադրանքներրը (բոլորի համար նույնը) :

Հանձնարարություն

«Կազմել գրատախտակին փակցված նկարների հակիրճ նախագիծը»:

Պայմանավորված դասարանի ընդհանուր պատրաստվածության մակարդակով՝ նկարների բովանդակությունը կարելի ներկայացնել կա՛մ բանավոր, կա՛մ էլ գրառելով տետրի մեջ: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կարծիքը:

Լսում ենք խմբերին: Երեխաները նկարագրությունից որոշում են և ապացուցում, թե որ եղանակի մասին է խասքը՝օգտվելով նախագծից: Այնուհետև յուրաքանչյուր խումբ իր պատասխանը համեմատում է նույն առաջադրանքը կատարող մյուս խմբերի նկարագրական բնագրերի հետ:

Այդ նպատակով դասարանը կարելի է բաժանել չորս խմբի. մի խմբին հանձնարարվում է ամառային անտառի նկարագրությունը,մյուսին՝ աշնանային անտառինը, երրորդին՝ձմեռային անտառինը, իսկ չորրորդին՝ գարնանային անտառինը:

Առաջադրանք. ուշադի՛ր դիտել նկարները և ստեղծագործական պատմություն հյուսել նկարի շուրջ:

5. Դասի ամփոփում

Դասի արդյունքներն ամփոփելու համար կրկնեցինք նկարագրական բնագրի կառուցվածքը՝ զուգահեռ ընթերցելով մեկ այլ բնագիր:

Այսպիսով, աշակերտները նկարագրական բնագրի մասին գաղափար են կազմում փուլ առ փուլ՝ ձեռք բերած պարզ, մատչելի գիտելիքները վերածելով նկարագրական խոսք կառուցելու կարողության, այսինքն, սովորում են ստեղծագործական խոսք կառուցել՝ գործածելով նաև նկարագրական տեսակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրտսեր դպրոցականների համար մայրենի լեզվի քերականական կողմի յուրացումը դժվար է, քանի որ այն առավել վերացական բնույթ ունի: Հետևաբար, պիտի մեթոդական բոլոր միջոցներով այդ գործընթացը դարձնել դյուրին. հայտնի է, որ աշակերտը լեզվի քերականական կողմը նախ յուրացնում է գործնականում՝ մեծահասակի խոսքի ընդօրինակման և լեզվական ընդհանրացումների շնորհիվ, ապա նոր՝ ուսուցման ճանապարհով այդ ամենի քերականական հիմքն է ձևավորվում:

Կապակցված խոսքը ներառում է երեխայի կողմից մայրենիի յուրացման ուղղությամբ ձեռքբերումները (հնչյունային կողմ, բառապաշար, քերականական կառուցվածք) և ամբողջացնում է նրա խոսքի ու մտավոր դաստիարակության ներդաշնակությունը: Իր մտքերը ներկայացնելիս երեխան մտածում, խոսում, տրամաբանում և կատարելագործում է սեփական խոսքը:

Կապակցված խոսքի շնորհիվ նա լուծում է նաև սոցիալական մի շարք խնդիրներ՝ հաղորդակցում շրջապատող մարդկանց հետ, հասարակության մեջ վարքագծային նորմերի կիրառում և այլն: Գեղարվեստական գրականության ընթերցումը, ընդհանրապես, ընթերցանությունը՝ մասնավորապես, ընթերցողի համար դառնում է ճիշտ, գեղեցիկ, գրագետ խոսքի նմուշօրինակ. սովորողները փորձում են ընդօրինակել գրողի բառապաշարը, լեզվական կառույցները, ոճը, հույզերը, նրա գործածած լեզվաարտահայտչամիջոցները:

Նկարագրական տեքստեր կառուցելու կարողությունը կարելի է ձևավորել տարրական դպրոցի ցանկացած դասարանում՝ պայմանավորված ուսումնական ծրագրով, դասարանի ընդհանուր պատրաստվածության մակարդակով, ուսուցչի թեմատիկ պլանավորումով:

Աշակերտները նկարագրական բնագրի մասին գաղափար են կազմում փուլ առ փուլ՝ ձեռք բերած պարզ, մատչելի գիտելիքները վերածելով նկարագրական խոսք կառուցելու կարողության, այսինքն, սովորում են ստեղծագործական խոսք կառուցել՝ գործածելով նաև նկարագրական տեսակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք, Ձանգակ-97, Երևան, 2009, 79 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, -Եր., Ձանգակ-97, 2009, -349 էջ:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, -Եր.:Էդիթ Պրինտ, 2011. -160 :
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, -Եր.:Էդիթ Պրինտ, 2011. -160 :
5. Հայոց լեզու, գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր:- Եր., Անտարես, 2006, -148 էջ: